

**«ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ և
ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԱՌԱՋԱՐԿ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրիպտոակտիվների և բլոկչեյն տեխնոլոգիայի զարգացումն ու տարածումն աշխարհում ստեղծել են ոլորտը կարգավորելու անհրաժեշտություն, և աշխարհի շատ երկրներ արդեն իսկ ընդունել են ոլորտը կարգավորող իրավական ակտեր, որոնք կարգավորում են կրիպտոակտիվներով տարատեսակ ծառայությունների մատուցման, կրիպտոակտիվների թողարկման, դրանց շրջանառության հետ կապված և կրիպտոակտիվներին առնչվող այլ հարաբերությունները: Ոլորտը կարգավորող իրավական ակտերի հիմնական նպատակը իրավահարաբերություններում որոշակիություն և հստակություն մտցնելն ու իրավահարաբերության սուբյեկտների՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցողների, սպառողների, պետության համար վարքագծի կանխատեսելիություն ապահովելն է:

ՀՀ կառավարությունը 2025 թվականի փետրվարի 27-ի N 208–Ա որոշմամբ հավանություն է տվել «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի նախագծին (այսուհետ նաև՝ Նախագիծ) և հարակից օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերին: Կրիպտոակտիվների կարգավորման ուղղված ՀՀ կառավարության նախաձեռնությունը ողջունելի է և կարող է լուրջ խթան հանդիսանալ ինչպես նորագույն տեխնոլոգիաների զարգացման, այնպես էլ ՀՀ-ի՝ ոլորտում առաջատար և ինովացիոն կենտրոնի ձևավորման և պետության տնտեսական զարգացման համար: Մակայն Նախագծում տեղ գտած որոշ սկզբունքային մոտեցումները և դրույթները մտահոգիչ են, և ոչ միայն կարող են խոչընդոտել երկրում նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը, այլև բացասաբար ազդել ՀՀ-ում կրիպտոարժույթների ոլորտի աճի վրա, ընդհուպ մինչև ամբողջությամբ անհնարին դարձնել ՀՀ-ում կրիպտոոլորտում գործունեություն ծավալելը, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային ընկերությունների համար:

Աշխարհի բազմաթիվ առաջատար և զարգացած երկրներ, ընդունելով կրիպտոարժույթների ոլորտը կարգավորող իրավական ակտեր, նպատակ ունեն հավասարակշռել ոլորտը ներկայացնող սուբյեկտների, հասարակության և պետության շահերը՝ դրա հետ մեկտեղ ապահովելով թե ոլորտի, թե պետության տնտեսական զարգացումը: «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի նախագծում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու սույն առաջարկը (այսուհետ նաև՝ Առաջարկ) նպատակ է հետապնդում վերհանել Նախագծի խնդրահարույց կարգավորումները և առաջարկել հարաբերությունների կարգավորման արդյունավետ, որոշակի և հստակ մեխանիզմներ՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա: Մեր նպատակն է օժանդակել ձևավորելու մի համակարգ, որը խրախուսում է նորարարությունը և նորագույն տեխնոլոգիաները կրիպտոակտիվների ոլորտում, միաժամանակ ապահովելով ներդրողների պաշտպանությունը և տնտեսական զարգացումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարց 1. Նախագծով կրիպտոակտիվները կարգավորող, վերահսկող և լիցենզավորող մարմնի իրավասությունները վերապահվել են ՀՀ կենտրոնական բանկին:

Առաջարկ և Հիմնավորում.

1. ՀՀ սահմանադրության 200-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական բանկի հիմնական նպատակը գների և ֆինանսական կայունության ապահովումն է, ու Կենտրոնական բանկը մշակում, հաստատում, և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

2. ՀՀ սահմանադրությամբ Կենտրոնական բանկին վերապահված նպատակներից և գործառույթներից հետևում է, որ Կենտրոնական բանկի նպատակը բացառապես ֆինանսական կայունության ապահովումն է: Ինչն էլ ենթադրում է, որ Կենտրոնական բանկն իր կառուցվածքային ստորաբաժանումներով, աշխատակազմով, փորձառությամբ ձևավորվել է այդ նպատակի իրականացման համար:

3. Կրիպտոակտիվների ոլորտի կարգավորումը առնչվում է Կենտրոնական բանկի նպատակներին և գործառույթներին այնքանով որքանով, որ կրիպտոակտիվը կհամարվի արժեթուղթ կամ ածանցյալ ֆինանսական գործիք: Ընդ որում Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով արդեն իսկ նախատեսվել է, որ *«Նախագծով սահմանված դրույթները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով արժեթղթի կամ ածանցյալ ֆինանսական գործիքի սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվների վրա, որոնց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով»:*

4. Աշխարհի մի շարք առաջատար երկրներ, որոնց կանոնադաշտնաք ստորև, այն տրամաբանական մոտեցումն են որդեգրել, որ կրիպտոարժույթների ոլորտը պետք է կարգավորվի պետության կենտրոնական բանկի կամ ավանդական ֆինանսական հաստատությունները կարգավորող մարմնի կողմից, այնքանով որքանով, որ կրիպտոակտիվները կհամարվեն ներդրումային գործիք, ընդ որում դա որոշելու համար հիմնականում կիրառվում է հայտնի «Howey» թեստը: Այստեղ է, որ առկա է ֆինանսական կայունության և սպառողների իրավունքների պաշտպանության խնդիր, և կենտրոնական բանկերն այստեղ ունեն հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ գործիքակազմն ու փորձառությունը:

5. Սակայն դրանից դուրս կրիպտոակտիվների ոլորտի կարգավորումը ամբողջությամբ Կենտրոնական բանկին վերապահելը լի է մի շարք խնդիրներով: Մասնավորապես Կենտրոնական բանկը մասնագիտացած է ավանդական ֆինանսական հաստատությունների կարգավորման մեջ և այդպիսի հաստատությունների լիցենզավորմանն ու կարգավորմանն ուղղված գործիքակազմը ոչ միայն արդյունավետ չէ կրիպտոոլորտի կարգավորման համար, այլև շատ հաճախ ընդհանրապես

կիրառելի չէ այդ հարաբերությունների նկատմամբ և դրանցով նախատեսված պարտականությունների կատարումը նույնիսկ որոշ դեպքերում փաստացի անհնար է: Կրիպտոակտիվները և բլոկչեյն տեխնոլոգիան էականորեն տարբեր կերպ են գործում ավանդական ֆինանսական և բանկային համակարգից: Հետևաբար ավանդական ֆինանսական և բանկային համակարգը կարգավորող նորմերը և նրանց առաջադրվող պահանջները չեն կարող ուղղակիորեն կիրառվել կրիպտոակտիվների նկատմամբ:

6. Կրիպտոակտիվների ոլորտի կարգավորման և լիցենզավորման նպատակով աշխարհի մի շարք երկրներ ստեղծել են մասնագիտացված մարմիններ կամ առանձնացված ստորաբաժանումներ (Ֆրանսիա՝ AMF անկախ մարմինը՝ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կազմում, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ կարգավորող մարմին՝ VARA, Մալթա՝ MFSA under the VFA Framework)՝ ամրագրելով այն հիմնարար մոտեցումը, որ արդյունավետ կարգավորման համար առաջին հերթին պետք է խորացված գիտելիքներ ունենալ բլոկչեյն տեխնոլոգիայի աշխատանքի սկզբունքների վերաբերյալ և տարանջատել այն ավանդական ֆինանսական հաստատություններից: Հակառակ դեպքում մենք ունենալու ենք ավանդական ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառելի կարգավորումները, որոնք փաստացի անհնար կդարձնեն այդ կարգավորումների հիման վրա գործունեություն ծավալելը: Որևէ երկրում կրիպտոոլորտի կարգավորումը տվյալ երկրի կենտրոնական բանկին կամ բանկային համակարգը կարգավորող մարմնին չի պատվիրակվել: Ամբողջ տրամաբանությունը կայանում է նրանում, որ բանկային գործունեությունը կարգավորող նորմերը չպետք է կիրառվեն կրիպտոոլորտի նկատմամբ, այլ պետք է դրսևորվի բալանսավորված մոտեցում, իսկ ոլորտի կարգավորումը ամբողջությամբ Կենտրոնական բանկին վերապահելը այդպիսի իրավիճակի մեծ ռիսկ է պարունակում:

7. Այսպիսով առաջարկում ենք կրիպտարժույթների կարգավորման նպատակով ստեղծել առանձին մարմին կամ ստորաբաժանում (օրինակ՝ Էկոնոմիկայի կամ Բարձր տեխնոլոգիաների նախարարության, կազմում), որին կվերապահվի կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցող անձանց լիցենզավորումը և ոլորտի վերահսկողությունը, և որի կարգավիճակը հստակ ամրագրված կլինի օրենքով, իսկ արժեթուղթ կամ ածանցյալ ֆինանսական գործիք համարվող կրիպտոակտիվների մասով ոլորտի կարգավորումը վերապահել Կենտրոնական բանկին:

Հիմնահարց 2. Նախագիծը չի ապահովում հստակ կարգավորման դաշտ, մասնավորապես Նախագծում առկա են մի շարք ոչ հստակ և անորոշ նորմեր: Նախագիծը չի ապահովում կարգավորումների կանխատեսելիությունը՝ դրանք մեծամասամբ թողնելով Կենտրոնական բանկի հայեցողությանը:

Առաջարկ և Հիմնավորում.

1. ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:»*

2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *«ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտն է»:*

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝*

1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»

4. Օրենքում իրավահարաբերությունները կարգավորող հիմնարար նորմերի կատարումը չի կարող ամբողջությամբ պայմանավորված լինել ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ: Ավելին ենթաօրենսդրական ակտի ընդունմամբ կարող է պայմանավորված լինել միայն օրենքի նորմի կատարումը, և ոչ՝ բովանդակությունը ամբողջությամբ: Օրենքը չի կարող բաղկացած լինել միայն բլանկետային նորմերից, որոնք հղում են տալիս ենթաօրենսդրական ակտերի, ենթաօրենսդրական ակտը միմիայն կարող է ընդունվել օրենքի կատարումն ապահովելու նպատակով:

5. Նախագծում մի շարք հիմնարար իրավահարաբերություններ, որոնք կներկայացնենք ստորև, օրենքով չեն կարգավորվել և այդ հարաբերությունների կարգավորումը թողնվել է Կենտրոնական բանկի հայեցողությանը: Օրենքն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, ընդունման, փոփոխման որոշակի և հստակ ընթացակարգ: Երբ հարաբերությունները չեն կարգավորվում օրենքով, այլ այդ հարաբերությունների կարգավորումը թողնվում է ենթաօրենսդրական ակտերին, ապա խախտվում է իրավական ակտերի աստիճանակարգությունը, օրինականության և իշխանությունների բաժանման հիմնարար սկզբունքները: Ենթաօրենսդրական ակտերը կարող են ընդունվել միմիայն օրենքի կատարումն ապահովելու նպատակով, դրանք չեն

կարող քողարկված ձևով կարգավորել այն հասարակական հարաբերությունները, որոնք ենթակա են կարգավորման բացառապես օրենքով: Օրենքը, որը փաստացի չի կարգավորում հասարակական հարաբերությունները, այլ թողնում է այդ հարաբերությունների գերակշիռ մասի կարգավորումը ենթաօրենսդրական ակտերին, որոշակի չէ, հստակ չէ և չի ապահովում վարքագծի կանխատեսելիությունը, հետևաբար այդպիսի օրենքը հակասահմանադրական է:

6. Ստորև կանդրադառնանք այն իրավահարաբերություններին, որոնք Նախագծով թողնվել են ենթաօրենսդրական ակտերի կարգավորմանը, սակայն պետք է կարգավորվեն օրենքով:

ա) ընդհանուր կապիտալի նվազագույն չափը

1. Նախագծի 44-րդ հոդվածի համաձայն Կենտրոնական բանկն է սահմանում հիմնական տնտեսական նորմատիվները, այդ թվում՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ընդհանուր կապիտալի նվազագույն չափը: Ընդ որում սահմանվում է նաև, որ Կենտրոնական բանկը կարող է վերանայել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ:

2. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց համար գործունեություն ծավալելու առաջին նախապայմանը ընդհանուր կապիտալի չափի ապահովումն է լինելու: Սա այն հիմնական տնտեսական նորմատիվն է, որը կանխորոշելու է կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձանց շրջանակը: Նախագծով չի սահմանվել ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և այն որոշելը թողնվել է Կենտրոնական բանկի բացարձակ հայեցողությանը: Ավելին Նախագծով չի սահմանվել նույնիսկ առավելագույն շեմ, որը որոշակի չափով կսահմանափակեր Կենտրոնական բանկի հայեցողությունը:

3. Նախագծի հիմնավորումներում և քննարկումներում բազմաթիվ անգամներ հիշատակվում է կրիպտոակտիվների ոլորտում հստակ և որոշակի կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը, սակայն ընդհանուր կապիտալի նվազագույն ողջամիտ չափ Նախագծով չսահմանելը, ինքնին բավարար է փաստելու, որ Նախագիծը չի բավարարում ՀՀ սահմանադրությամբ օրենքին առաջադրվող որոշակիության և հստակության պահանջներին:

4. Ավելին աշխարհի բոլոր առաջատար երկրներում կրիպտոակտիվների ոլորտը կարգավորող օրենքները սահմանում են ընդհանուր կապիտալի ողջամիտ նվազագույն չափ: Մասնավորապես, Նախագծի մշակման համար ուղենիշ հանդիսացած ԵՄ «The Markets in Crypto-Assets Regulation (MiCA)» կարգավորումը՝ կախված մատուցվող ծառայության տեսակից հստակ սահմանում է ոչ միայն ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը՝ այլև մնացյալ տնտեսական նորմատիվները¹: Մասնավորապես MiCA կարգավորման Հավելված 4-ով կախված մատուցվող ծառայության

¹ Տե՛ս, **Article 67(1)(a)** and **Annex IV** of MiCA.

տեսակից նախատեսված է 50,000 կամ 150,000 Եվրո չափով ընդհանուր կապիտալի պահանջ: ԱՄԷ-ում VARA կարգավորման շրջանակներում նույնպես հստակ սահմանվել են բոլոր անհրաժեշտ տնտեսական նորմատիվները կախված մատուցվող ծառայության տեսակից²: Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի պահանջը կախված մատուցվող ծառայության տեսակից կարող է լինել 100,000-ից մինչև 1,500,000 դիրհամ: Մինգապարում նույնպես կախված ծառայությունը մատուցող ընկերության կարգավիճակից սահմանված է մոտ 100,000 ԱՄՆ դոլարի չափով ընդհանուր կապիտալի նվազագույն չափի պահանջ³: ՀՀ-ում ընդհանուր կապիտալի պահանջի ողջամիտ չափ պետք է սահմանվի, հիմք ընդունելով վերոնշյալ երկրներում սահմանված ընդհանուր կապիտալի չափի պահանջները և այն փաստը, որ այդ երկրների ՀՆԱ-ն մի քանի անգամ գերազանցում է ՀՀ-ի ՀՆԱ-ն:

5. Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և մնացած տնտեսական նորմատիվները պետք է սահմանվեն օրենքով, դրանք չեն կարող սահմանվել ենթաօրենսդրական ակտով: Դրանք սահմանող ենթաօրենսդրական ակտը չի կարող համարվել ի կատարումն օրենքի ընդունված, քանի որ փաստացի կարգավորելու է օրենքով չկարգավորված հարաբերությունը: Նախագծի 44-րդ հոդվածի 2-րդ մասը ամբողջությամբ հակասում է ՀՀ սահմանադրությանը: Նախագծի 44-րդ հոդվածի 1-ին մասի առկայության պայմաններում, երբ Ազգային ժողովի կողմից ընդունվում և սահմանվում են տնտեսական նորմատիվները, Կենտրոնական բանկի կողմից չեն կարող կամայականորեն սահմանվել օրենքով չնախատեսված տնտեսական նորմատիվներ, այդ թվում՝ ժամանակավոր գործողության տնտեսական նորմատիվներ: Փաստացի սույն դրույթով Կենտրոնական բանկին տրվում է ոչ թե ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորություն, այլ դրանով քողարկված ձևով Կենտրոնական բանկին է վերապահվում բացառապես ՀՀ Ազգային ժողովին պատկանող օրինաստեղծ գործառնությունը: Կենտրոնական բանկը չի կարող իրականացնել օրինաստեղծ գործառնություն: Այս նորմը կոպտորեն խախտում է օրինականության, իրավական որոշակիության և իշխանությունների բաժանման սահմանադրական հիմնարար սկզբունքները:

6. Այսպիսով առաջարկում ենք օրենքով հստակ սահմանել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և մնացյալ տնտեսական նորմատիվները՝ կախված մատուցվող ծառայության տեսակից:

բ) Լիցենզավորման դիմումի մերժման հիմքերը

1. Նախագծի 20-րդ հոդվածը կարգավորում է կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձի լիցենզավորման հետ կապված հարաբերությունները: Նախագծի 20-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորման դիմումի մերժման հիմքերը:

² **Stu**, Part VI of VARA's Company Rulebook.

³ <https://www.mas.gov.sg/regulation/payments/licensing-for-payment-service-providers>

2. Նախագծի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Կենտրոնական բանկը կարող է մերժել դիմորդի լիցենզավորումը կամ կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու լիցենզիայի տրամադրումը, եթե ղեկավարները չեն բավարարում սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին»:*

3. Ղեկավարների և աշխատակիցների նկատմամբ պահանջները սահմանված են Նախագծի 34-րդ հոդվածով: Նախագծի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ *«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ղեկավար չի կարող լինել այն անձը, որը անցյալում կատարել այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ղեկավար, չի կարող պատշաճ կերպով կառավարել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը»:*

4. Վերոնշյալ նորմը իրավասահմանափակող է, հետևաբար պետք է ձևակերպվի բավարար չափով որոշակի՝ վարքագծի կանխատեսելիությունն ապահովելու նպատակով: Ձևակերպումը խիստ անորոշ է, պետք է օրենքով ամբողջությամբ հստակ նախատեսվեն ղեկավարին առաջադրվող չափանիշները: Վերլուծության սկզբում հիմնավորել ենք հարաբերությունները օրենքով կարգավորելու անհրաժեշտությունը, այս դեպքում ևս Կենտրոնական բանկին ղեկավարի անհամապատասխանության մասին եզրակացություն տալու լիազորություն է տրվել խիստ անորոշ հիմքով: Ղեկավարի անհամապատասխանությունը անցյալում կատարված որևէ արարքի հետ կապելու դեպքում պետք է այդ արարքների նկարագիրը նախատեսվի օրենքով կամ առնվազն պետք է նախատեսվեն դրա չափանիշները, որոնց շրջանակներում միայն Կենտրոնական բանկը կարող է սահմանել համապատասխան ուղեցույցներ: Այդպիսի չափանիշների բացակայության պայմաններում Կենտրոնական բանկը ոչ միայն ուղղակի ուղեցույց է սահմանում, այլ փաստացի հենց այդ չափանիշերն է սահմանում:

5. Նախագծի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ *«Կենտրոնական բանկը կարող է մերժել դիմորդի լիցենզավորումը կամ կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու լիցենզիայի տրամադրումը, եթե Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով գործարար ծրագիրն անիրատեսական է, կամ գործելով գործարար ծրագրին համապատասխան՝ դիմորդը չի կարող բնականոն մատուցել կրիպտոակտիվներով ծառայություններ»:*

6. Այս նորմը խիստ անորոշ է: Գործարար ծրագրի անիրատեսականության հիմքով լիցենզիայի տրամադրման մերժումը պետք է հիմնված լինի օրենքով գործարար ծրագրին առաջադրվող պահանջների և այդ պահանջները անիրատեսական որակելու օրենքով սահմանված չափանիշների

վրա: Ակնհայտ է, որ որևէ երևույթ անիրատեսական համարելու չափանիշներ չեն կարող նախատեսվել և ցանկացած երևույթի անիրատեսականությունը խիստ սուբյեկտիվ կատեգորիա է: Այսպիսի ձևակերպումը հակասում է ոչ միայն իրավաբանական տեխնիկայի, այլև տրամաբանության կանոններին: Լիցենզիայի տրամադրումը մերժելու այսպիսի հիմք չի կարող նախատեսվել ընդհանրապես: Նույն հիմնավորումները վերաբերում են նաև «ծառայությունների բնականոն մատուցում» հասկացությանը: Այս հասկացությունները ինքին այնքան անորոշ են, որ նույնիսկ օրենքով հնարավոր չէ նախատեսել չափանիշներ, որոնք թույլ կտան որոշելու դրանց սահմաններն ու բովանդակությունը: Ոչ միայն օրենքով չեն նախատեսվել դրանց չափանիշները, այլև ընդհանրապես խոսք չի գնում դրանց սահմանների ու բովանդակության մասին՝ դրանց որոշումը թողնելով Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքին: Պետական մարմնի կարծիքը կարող է հիմնավորված լինել միայն այն դեպքում, երբ այն հիմնված է օրենքի վրա, եթե օրենքում չունենք համապատասխան չափանիշներ, ապա այդպիսի կարծիքը չի կարող հիմնավոր համարվել:

7. Նախագծի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ *«Կենտրոնական բանկը կարող է մերժել դիմորդի լիցենզավորումը կամ կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու լիցենզիայի տրամադրումը, եթե դիմորդը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ տեղեկատվական անվտանգության ապահովման չափանիշներին»:*

8. Կենտրոնական բանկն է սահմանում տեղեկատվական անվտանգություն չափանիշները, սակայն օրենքով ընդհանրապես բացահայտված չէ, թե ինչ է իրենից ենթադրում տեղեկատվական անվտանգությունը և ինչ չափանիշներ կարող է սահմանել Կենտրոնական բանկը: Օրենքով պետք է տրվի այդ չափանիշների առնվազն ընդհանուր բնութագիրը, հակառակ պարագայում կարող են սահմանվել ցանկացած տեսակի չափանիշներ առանց որևէ սահմանափակման:

9. Նախագծի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ *«Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով դիմորդի նշանակալից մասնակիցների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը, ֆինանսական վիճակը, բացասական հեղինակությունը, ֆինանսական կամ կրիպտոակտիվների ոլորտում փորձառության բացակայությունը կարող է վտանգել հաճախորդների շահերը կամ իրավունքները կամ խոչընդոտել դիմորդի կողմից կրիպտոակտիվներով ծառայությունների բնականոն մատուցմանը կամ Կենտրոնական բանկի կողմից պատշաճ վերահսկողության իրականացմանը»:*

10. Այս նորմում նույնպես տեղ են գտել օրինակ «բացասական հեղինակություն», «Կենտրոնական բանկի պատշաճ վերահսկողություն» հասկացությունները, որոնք արդեն իսկ վերևում կատարված վերլուծությունների հիման վրա անընդունելի են հստակության և որոշակիության տեսանկյունից: Այս հիմքերով կարելի է մերժել լիցենզիայի տրամադրման ցանկացած դիմում: Այդ դրույթները խախտում են նաև վարչարարության հիմնարար սկզբունք համարվող կամայականության արգելքը: Ինչպես արդեն նշել ենք պետական մարմնի կարծիքը

կարող է հիմնավորված լինել միայն այն դեպքում, երբ այն հիմնված է օրենքի վրա, եթե օրենքում չունենք համապատասխան չափանիշներ, ապա այդպիսի կարծիքը չի կարող հիմնավոր համարվել: Օրենքը չի կարող անձին գրկել որևէ իրավունքի տրամադրումից վերոնշյալ հիմքերով: Այս դրույթները հակասահմանադրական են և չեն կարող ընդունվել այսպիսի ձևակերպումներով:

11. Նախագծի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ *«Կենտրոնական բանկը կարող է մերժել դիմորդի լիցենզավորումը կամ կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու լիցենզիայի տրամադրումը, եթե դիմորդը չի բավարարում սույն օրենքով և այլ իրավական ակտերով կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման համար սահմանված այլ պահանջներին»:* Այս նորմը ՀՀ սահմանադրության և օրենսդրական տեխնիկայի հանրաճանաչ սկզբունքների կոպիտ ոտնահարման վառ ապացույցն է: Լիցենզավորման դիմումի մերժման հիմքերը ինչպես բազմիցս նշել ենք պետք է լինեն հստակ, որոշակի, ինչը ենթադրում է, որ դրանք պետք է լինեն սահմանափակ: Այս մեկ դրույթով փաստացի նախատեսվել են լիցենզավորման դիմումի մերժման անսահմանափակ քանակով հիմքեր: Մյուս մերժման հիմքերը այս հիմքի առկայության պարագայում կորցնում են իմաստը, և դրանք սահմանելը փաստացի դառնում է ինքնանպատակ: Կարելի էր միայն այս հիմքը սահմանել և վերջ: Սակայն ակնհայտ է, որ այս դրույթը բացառապես նախատեսվել է դիմումները կամայականորեն մերժելու նպատակով: Կենտրոնական բանկը ցանկացած պահի կարող է ընդունել ենթաօրենսդրական ակտ և դրա պահանջների չբավարարման հիմքով կարող է մերժել լիցենզավորման ցանկացած դիմում: Լիցենզավորվող այլ տեսակի գործունեություններ և դրանց մասով լիցենզիայի մերժման հիմքեր սահմանող որևէ այլ ՀՀ օրենքում նման ձևակերպում հնարավոր չէ գտնել, բոլոր մյուս օրենքները նախատեսում են դիմումի մերժման սահմանափակ հիմքեր:

12. Առաջարկում ենք ամբողջությամբ վերաձևակերպել լիցենզիայի դիմումի մերժման հիմքերը և Նախագծից հանել անորոշ հիմքերը, հասկացություններն ու ձևակերպումները:

զ) գործունեության կասեցման և լիցենզիայից գրկելու հիմքերը

1. Նախագծի 83-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Կրիպտոակտիվների շուկան կարգավորող իրավական ակտերի պահանջների պահպանման այդ թվում՝ կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձանց ներքին իրավական ակտերի պահանջների կատարման և պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնելիս տվյալ անձի կամ ֆինանսական համակարգի ֆինանսական կայունության կամ սույն օրենքի նպատակներից ելնելով Կենտրոնական բանկն իրավունք ունի իր հիմնավոր կարծիքով կասեցնել որոշակի կրիպտոակտիվներով կամ կրիպտոակտիվներով որոշակի ծառայությունների մատուցումը, բայց ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով (...):»:*

2. Գործունեության կասեցման հիմքերը պետք է օրենքով հստակ նախատեսվեն: Մասնավորապես, պետք է օրենքով նշվեն այն հիմքերը որոնց առկայության պարագայում

հնարավոր է կասեցնել կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձի գործունեությունը: Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքը առանց օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության չի կարող հիմք հանդիսանալ անձի տնտեսական գործունեության կասեցման համար: Դրա արդյունքում անձը կարող է լուրջ վնասներ կրել և կասեցումը կարող է ընդհուպ մինչև հանգեցնել անձի սնանկության և գործունեության ամբողջական դադարեցման: Այս հիմքը կարող է կամայականորեն կիրառվել լիցենզիայի դադարեցման հիմքերի բացակայության պայմաններում և անուղղակիորեն ստիպել անձին դադարեցնել իր գործունեությունը ամբողջությամբ: Նախագծով պետք է հստակ սահմանվեն գործունեության կասեցման հիմքերը:

3. Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում են լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքերը: Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ *«կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կամ նրա ղեկավարները թույլ են տվել սույն օրենքի, այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ներքին իրավական ակտերի պահանջների պարբերական (երկու և ավելի) կամ էական խախտումներ: Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը չի իրականացրել Կենտրոնական բանկի կողմից սույն օրենքի համաձայն տրված հանձնարարականները՝ սահմանված ժամկետում կամ չափով:»*

4. Էական խախտման հիմքով լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում պետք է սահմանվի էական խախտման բնորոշումը: Բացի այդ ցանկացած տեսակի պարբերական խախտում չի կարող հիմք հանդիսանալ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար: Խախտման համար պատասխանատվությունը պետք է համապատասխանի խախտման ծանրության աստիճանին և բնույթին: Օրենքով պետք է ամրագրվեն, թե որ տեսակի խախտումներն են համարվում էական և որոնց պարբերական կատարումը կարող է հիմք լինել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար: Կենտրոնական բանկի հանձնարարական չկատարելը որևէ պարագայում չի կարող լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմք հանդիսանալ՝ այս դրույթը ուղղակի ոստահարում է օրինականության սկզբունքը և վարչարարության մասին ամբողջ ՀՀ օրենսդրությունը:

5. Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ *«լիցենզիան ստանալուց հետո ի հայտ է եկել սույն օրենքով սահմանված լիցենզիայի տրամադրումը մերժելու հիմքերից որևէ մեկը»:*

6. Այս դրույթը ավտոմատ կերպով լիցենզիայի տրամադրումը մերժելու հիմքերը դարձնում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքեր, ինչը իրավաչափ չէ: Լիցենզիայի տրամադրումը մերժելու բոլոր հիմքերը չեն կարող առանց որևէ փոփոխության և վերաձևակերպման համարվել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքեր: Նամանավանդ հստակ չէ, թե ինչ նկատի ունենք ասելով ի հայտ է եկել որևէ հիմք: Մասնավորապես, այդ հիմքը լիցենզիայի համար դիմելիս եղել է, սակայն նոր է ի հայտ եկել, թե ընդհանրապես հիմքը նոր է ի հայտ եկել և նախկինում չի եղել: Ընդ որում վերևում անդրադարձել ենք լիցենզիայի տրամադրումը մերժելու հիմքերի

իրավաչափությանը և այս պարագայում, երբ լիցենզիայի տրամադրումը մերժելու հիմքերը նախատեսվում են նաև, որպես լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքեր էլ ավելի է կարևորվում դրանց հստակ և որոշակի ձևակերպումը:

Հիմնահարց 3. «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքում կատարված լրացմամբ նախատեսվել է, որ կրիպտոակտիվի օտարման կամ այլ հիմքով դրա նկատմամբ սեփականության ձեռքբերման դիմաց վճարումը և վճարման ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման ենթակա գումարի չափից:

Առաջարկ և Հիմնավորում.

1. «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքում կատարված լրացման արդյունքում ստացվում է, որ կրիպտոակտիվի օտարման կամ այլ հիմքով դրա նկատմամբ սեփականության ձեռքբերման դիմաց վճարումը և վճարման ստացումը պետք է իրականացվեն անկանխիկ ձևով, ինչն իր հերթին ենթադրում է, որ կրիպտոակտիվ ներառող ցանկացած տեսակի գործարք ենթադրելու է միջնորդավճարի վճարում ոչ միայն կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին, այլև համապատասխան բանկային միջնորդներին, ինչն առաջին հերթին հակասում է կրիպտոակտիվների էությանը, քանի որ կրիպտոակտիվներով փոխանցումների էական առավելություններից մեկը հենց միջնորդների բացակայությունն ու փոխանցումների արագությունն է:

2. Նման մոտեցման պարագայում կրիպտոակտիվներով փոխանցումների իրականացումը դառնում է ըստ էության ավելի խրթին քան ուղղակի իրականացվող բանկային փոխանցումները, ինչը դրանք բանկային փոխանցումների համեմատ դարձնում է ոչ մրցունակ: Կրիպտոտրոտի կարգավորումները պետք է ուղղված լինեն ոլորտի հարաբերությունները իրավական դաշտ բերելուն, ոչ թե այնպիսի պահանջներ սահմանելուն, որոնք արհեստականորեն ոչ մրցունակ են դարձնում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, սահմանափակում նրանց գործունեությունը և ստեղծում մրցակցային անհավասար պայմաններ:

3. ՀՀ-ում բանկերը հրաժարվում են ոչ միայն հաշիվներ բացել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց համար, այլև հրաժարվում են սպասարկել կրիպտոակտիվների հետ որևէ կերպ կապված գործարքները: Չկա որևէ երաշխիք, որ բանկերը կսպասարկեն կրիպտոակտիվների հետ կապված գործարքները, ավելին չկա նաև որևէ երաշխիք, որ բանկերը, կրիպտոակտիվներ ներառող գործարքները «ռիսկային» որակելով, սպասարկման ավելի բարձր արժեքներ չեն սահմանի: Այս կարգավորման արդյունքում բանկերին ըստ էության մրցակից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք ամբողջությամբ կախման մեջ են դրվում բանկերից՝ ստեղծելով մրցակցային անհավասար պայմաններ:

4. Կրիպտոակտիվներով մատուցվող հիմնական ծառայություններից է փոխանակումը (exchange), որը ներառում է ինչպես կրիպտոարժույթից կրիպտոարժույթ փոխանակում, այնպես էլ կրիպտոարժույթից ավանդական արժույթի և ավանդական արժույթից կրիպտոարժույթի փոխանակումը: Այս մոտեցումը խտրական է և տրամաբանական չէ, որ ավանդական արժույթի փոխանակման կետերը իրավունք ունեն փոխանակել կանխիկ արժույթը մեկ այլ արժույթով, սակայն կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք պետք է փոխանակումը իրականացնեն բացառապես անկանխիկ եղանակով՝ մասնավորապես բանկերի միջնորդությամբ:

5. ՀՀ այցելող զբոսաշրջիկների մեծ մասը ՀՀ-ում փոխանակում է կանխիկ գումարը կրիպտոարժույթով ինչը հարմար և արդյունավետ է նրանց համար՝ հաշվի առնելով ՀՀ-ում նրանց գտնվելու կարճ ժամկետը և ՀՀ-ում բանկային հաշիվ բացելու համար պահանջվող ժամանակահատվածը և շատ հաճախ բանկային հաշիվ բացելու անհնարինությունը: Այս առումով ցանկանում ենք հատուկ նշել ՀՀ որոշ առանձնահատկություններ, որոնք ավելի ակնառու են դարձնում այս խնդիրը: Դրանցից մեկը մեր հարևան Իրանի գործարարների կողմից կրիպտոարժույթով ՀՀ-ի հետ առևտուր անելու ծավալներն են, և այդ շուկայի կարևորությունը մեր տնտեսության համար: Սակայն ոչ միշտ է, որ այդ կանոնները համապատասխանում են ՀՀ արտաքին քաղաքականությանը կամ պետության ստանձնած պարտավորություններին: Նման պայմաններում բանկային համակարգի այլընտրանք կրիպտոփոխանցումները դարձել են կարևոր գործիք նշված ոլորտներում առևտրի արդյունավետության ապահովման, և որպես հետևանք տնտեսական զարգացման համար, ինչը անհրաժեշտ է պահպանել և ավելի զարգացնել: Համանման խնդիրներ լինում են նաև Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների գործարարների հետ հարաբերություններում: Բացի այդ մեր պետության շահերից է սփյուռքի, և առհասարակ օտարերկրացիների Հայաստան ժամանելու և տուրիստական ծախսեր հոգալու, և/կամ ներդրումներ անելու ընթացակարգերը առավելապես դրոշմադրարկի դարձնելը, ինչը հնարավոր է կրիպտո – կանխիկ դրամ, և օտարերկրյա արժույթ – կրիպտո փոխանակումները պարզեցնելու պարագայում:

6. Ինչ վերաբերում է փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարին, ապա այդ նպատակով ոչ թե պետք է ընդհանրապես արգելել կանխիկով գործարքների իրականացումը, այլ կարելի է ներդնել AML/KYC⁴ համապատասխան կառուցակարգ և օրենքով սահմանել դրան ներկայացվող պահանջները կախված փոխանակվող գումարի չափից, ինչպիսի մոտեցումը ընդունված է աշխարհի մի շարք առաջատար երկրներում: Ի վերջո փոխանակման կետերը, ինչու չէ նաև բանկերը նույնպես շրջանառում են մեծ չափով կանխիկ գումար այդ տրամաբանությամբ բանկերին նույնպես պետք է արգելել կանխիկ դրամի ընդունումը կամ փոխանակումը կամ ընդհանրապես գումարի կանխիկացումը: Սակայն այդ կազմակերպությունների համար նման արգելք չի սահմանվել, այլ AML/KYC կառուցակարգերի պահպանմամբ նրանք շարունակում են մատուցել ծառայություններ, իսկ դրան հակառակ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող ընկերություններին ընդհանրապես արգելվում է կանխիկով ծառայությունների մատուցումը՝ նույնիսկ չի քննարկվել

⁴ Հապավումները բացվում են հետևյալ կերպ՝ Anti-Money Laundering and Know Your Customer

AML/KYC կառուցակարգի ներդրմամբ կանխիկով ծառայություններ մատուցելու հնարավորությունը:

7. Դրան հակառակ ԱՄՆ-ում գործում են 29886, Եվրոպայում՝ 1739, Շվեցարիայում միայն՝ 130, Կանադայում՝ 3266, Ավստրալիայում՝ 1698 կրիպտոարժույթների ֆիզիկական փոխանակման կետեր՝ հիմնականում ATM-ների տեսքով⁵, որոնց միջոցով անձինք հնարավորություն ունեն կանխիկ գումարը փոխանակել կրիպտոարժույթի: Ավելին ԱՄՆ-ում առանց նույնականացման հնարավոր է օրական կանխիկ մինչև 3,000 (երեք հազար) ԱՄՆ դոլար, իսկ նույնականացմամբ մինչև 25,000 ԱՄՆ (քսանհինգ հազար) դոլար գումար փոխանակել կրիպտոարժույթի, Շվեցարիայում համապատասխանաբար՝ մինչև 3,000 (երեք հազար) շվեցարական ֆրանկ և 10,000 (տաս հազար) շվեցարական ֆրանկ, Մեծ Բրիտանիայում համապատասխանաբար՝ մինչև 2,500 (երկու հազար հինգ հարյուր) ֆունտ ստեռլինգ և 10,000 (տաս հազար) ֆունտ ստեռլինգ: Ընդ որում այս փոխանակման կետերը համապատասխան կարգով լիցենզավորված են, օրենքով սահմանված դեպքերում իրականացնում են KYC/AML, վերահսկվում են համապատասխան պետական մարմինների կողմից և ձևավորված եկամտից վճարում են հարկեր: Այսինքն չնայած այն փաստին, որ աշխարհի բազմաթիվ առաջատար երկրներում ընդունված է և թույլատրվում է կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցումը կանխիկ ձևով, ՀՀ-ում հաշվի չառնելով միջազգային փորձը և առանց որևէ հիմնավորման, առանց KYC/AML համակարգ ներդնելու հարցի քննարկման ամբողջությամբ փաստացի արգելվել է կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց կանխիկով ծառայությունների մատուցումը:

8. Այսպիսով առաջարկում ենք թույլատրել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց այդ ծառայությունները մատուցել նաև կանխիկով և կախված գումարի չափից ներդնել ու օրենքով սահմանել KYC/AML իրականացնելու ողջամիտ կառուցակարգ և պահանջ:

Հիմնահարց 4. Նախագծով նախատեսված անցումային դրույթը բավարար չափով հստակ չէ, որ թույլ տա մինչև օրենքի ընդունումը կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց օրենքի ընդունումից հետո շարունակել գործունեության իրականացումը, մինչև լիցենզիայի տրամադրման դիմումի վերաբերյալ որոշումը:

Առաջարկ և Հիմնավորում.

1. Նախագծի ընդունման պարագայում կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցումը դառնալու է լիցենզավորվող գործունեության տեսակ, և այդպիսի ծառայություններ մատուցող անձինք իրավունք են ունենալու գործունեություն ծավալել միայն լիցենզիայի առկայության պարագայում:

⁵ <https://coinatmradar.com/charts/top-operators/>

2. Նախագծի 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անձինք, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցում են սույն օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված կրիպտոակտիվներով ծառայություններ, պետք է սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում սույն օրենքով սահմանված կարգով գրանցվեն և լիցենզավորվեն Կենտրոնական բանկի կողմից՝ որպես կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձ:»

3. Նախագծի 94-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն հոդվածի 2-րդ մասում չներառված անձինք կրիպտոակտիվներով ծառայություններ կարող են մատուցել միայն սույն օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից գրանցման և լիցենզավորման (թույլտվության պահանջի առկայության դեպքում՝ թույլտվության ստացման) դեպքում:»

4. Առաջին հերթին սահմանված անցումային դրույթը չի հստակեցնում՝ «Անձինք» հասկացությունը վերաբերում է իրավաբանական, թե ֆիզիկական անձանց: Պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ-ում բանկերը հրաժարվում և չեն բացում հաշիվներ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող իրավաբանական անձանց համար, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին մատուցել են այդ ծառայությունները, որպես անհատ ձեռնարկատերեր: Հետևաբար վերոգրյալ դրույթը պետք է սահմանել այնպես, որ դրա գործողությունը տարածվի նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ:

5. Բացի այդ սահմանված անցումային դրույթը հստակ չէ, քանի որ այն կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց վրա միայն պարտականություն է դնում մեկ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով լիցենզավորվելու և գրանցվելու, և ինչպես 94-րդ հոդվածի 2-րդ, այնպես էլ 3-րդ մասը հստակ չեն նշում, որ լիցենզիայի համար դիմում ներկայացնելը իրավունք է տալիս նախկինում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցած անձանց շարունակել ծառայությունների մատուցումը: Ավելին հաշվի չի առնվել այն փաստը, որ գրանցվելու և լիցենզավորվելու գործընթացը կարող է մեկ տարուց ավել տևել պայմանավորված լիցենզավորման դիմում ներկայացրած անձի կամքից անկախ մի շարք հանգամանքներով: Մասնավորապես, Օրենքը կարգավորում է երբևէ չկարգավորված նոր հարաբերություններ և փաստացի օրենքի ընդունումից հետո դեռևս պետք է Կենտրոնական բանկի կողմից ընդունվեն մի շարք ենթաօրենսդրական ակտեր ու հայտնի չէ, թե դրա համար ինչքան ժամանակ կպահանջվի, ավելին պարզ չէ նաև լիցենզավորման գործընթացի տևողությունը: Այս գործընթացները կարող են տևել մոտ երկու տարի և ավել, ու փաստացի ստացվում է, որ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք անորոշ ժամկետով դադարեցնելու են իրենց գործունեությունը, ինչը կարող է հանգեցնել նրանց սնանկության և գործունեության ամբողջական դադարեցման:

6. Աշխարհի մի շարք երկրներում այս հարցը կարգավորվել է և օրենքով նախատեսվել է դրույթ, որը հնարավորություն է տալիս մինչև ոլորտը կարգավորող օրենքի ընդունումը ոլորտում գործունեություն ծավալած անձանց շարունակել ծառայությունների մատուցումը *մինչև լիցենզիայի տրամադրման դիմումի վերաբերյալ որոշման կայացումը* (sandbox period): Այս մոտեցումը ապահովել է ոլորտի մասնակիցների անխափան գործունեությունը և դրա շարունակականությունը:

7. Այսպիսի կարգավորում նախատեսվել է Նախագծի համար ուղենիշ հանդիսացած MiCA կարգավորմամբ, որի 143-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Գրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք, ովքեր մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը մատուցել են իրենց ծառայությունները կիրառելի օրենքին համապատասխան, կարող են շարունակել ծառայությունների մատուցումը մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը կամ մինչև լիցենզիայի տրամադրումը կամ մերժումը, կախված թե որ ժամկետը ավելի վաղ վրա կհասնի»*⁶:

8. Այսպիսով առաջարկում ենք Նախագծով նախատեսել համանման դրույթ, որի համաձայն մինչև Նախագծի ընդունումը կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք օրենքի ընդունումից հետո իրավունք ունեն շարունակել ծառայությունների մատուցումը, մինչև լիցենզիայի տրամադրման դիմումի վերաբերյալ որոշումը կամ երկարաձգել տրամադրվող մեկ տարի ժամկետը և սահմանել նվազագույնը երկու տարի ժամկետ՝ հստակ նշելով, որ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո լիցենզավորման դիմում ներկայացնելը իրավունք է տալիս նախկինում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցած անձանց շարունակել ծառայությունների մատուցումը:

⁶ Տ՝ւ, **Article 143(3)** of MiCA.

ՏԵՍԼԱԿԱՆ

Կարևորելով Հայաստանի Հանրապետությունում կրիպտոակտիվների և բլոկչեյն տոխնոլոգիայի զարգացումն ու տարածաշրջանում նորագույն տեխնոլոգիաների զարգացման կենտրոն լինելու բացառիկ հնարավորությունը, ինպես նաև ոլորտի խթանման արդյունքում սպասվելիք ֆինանսական ակտիվների հոսքը և ամբողջ տարածաշրջանը Հայաստանի Հանրապետությունից սպասարկելու եզակի հնարավորությունը, որն իր հերթին Հայաստանի Հանրապետությանն օժտելու է տնտեսական զարգացման ահռելի ներուժով, միաժամանակ առաջնահերթ համարելով պետության անվտանգությունը, հասարակության, ներդրողների և սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, առաջարկում ենք որդեգրել ոլորտի կարգավորման այնպիսի հայեցակարգ, որն առավելագույնս կապահովի վերոգրյալ նպատակների իրագործումը և ընձեռնված հնարավորությունների արդյունավետ օգտագործումը: Ավանդական ֆինանսական հաստատությունները կարգավորող նորմերը կրիպտոարժույթների հետ կապված հարաբերությունները չեն կարող կարգավորել, քանի որ դրանք իրենց բնույթով յուրատեսակ են և էականորեն տարբերվում են նախորդներից: Ներկայիս մոտեցումն ու հայեցակարգը բացառապես ուղղված է ոլորտի սահմանափակմանը, ոլորտի զարգացման համար արհեստական խոչընդոտների ստեղծմանը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը բաց է թողնելու տնտեսական աննախադեպ զարգացման եզակի հնարավորությունը:


Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք կրիպտոարժույթների կարգավորման նպատակով ստեղծել առանձին մարմին կամ ստորաբաժանում (օրինակ՝ Էկոնոմիկայի կամ Բարձր տեխնոլոգիաների նախարարության, կազմում), որին կվերապահվի կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցող անձանց լիցենզավորումը և ոլորտի վերահսկողությունը, իսկ արժեթուղթ կամ ածանցյալ ֆինանսական գործիք համարվող կրիպտոակտիվների մասով ոլորտի կարգավորումը վերապահել Կենտրոնական բանկին, ստեղծել կրիպտոարժույթներով ծառայություններ մատուցող անձանց ռեգիստր, որտեղ կգրանցվեն լիցենզավորված անձինք, ապահովել որպես իրավաբանական անձ գործելու ու բանկային հաշիվ ունենալու հնարավորությունը, սահմանել կրիպտոարժույթներով ծառայություններ մատուցման տեսակները և հարկման ռեժիմները, լիցենզավորման և գրանցման համար հստակ և որոշակի ձևով նախատեսել հետևյալ հիմնական պահանջները՝ նվազագույն կապիտալի ողջամիտ չափ, KYC, AML/CFT կառուցակարգ և ստանդարտներ, բիզնես պլանին և ղեկավարներին առաջադրվող հստակ ու ողջամիտ պահանջներ, անվտանգության համակարգ և ռեգերվների համապատասխանությունն ապահովելու ողջամիտ պահանջներ:

Այսպիսով աջարկում ենք հետևել Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի (Շվեյցարիան համարվելով աշխարհի բանկային համակարգի կենտրոնը՝ ստեղծել է աշխարհում իր բնույթով առաջին Կրիպտո հովիտը, որը համարվում է բլոկչեյն տեխնոլոգիաների զարգացման և կրիպտո ստարթափների աշխարհի առաջատար կենտրոնը, ինչպես նաև Շվեյցարիայի կառավարությունը հիմնադրել է “Blockchain Taskforce” մարմինը, որի նպատակը ոլորտում իրավական կառուցակարգեր ստեղծելն

է), Սինգապուրի, Արգենտինայի և մի շարք այլ զարգացած երկրների օրինակին և ընդունել ոլորտի զարգացումն խթանող և միաժամանակ պետության անվտանգությունը, հասարակության, ներդրողների և սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ապահովող հայեցակարգ և իրավական կարգավորումներ, որոնք ստեղծված կլինեն, հիմքում ունենալով կրիպտոարժույթների բնույթն ու էությունը, և ուղղված կլինեն նոր ու իր բնույթով յուրատեսակ հարաբերությունների կարգավորմանը:



ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ



ՍԱՐԳՍԻՅԱՆ ԱՐՄԵՆ